Գերմանական համագործակցություն
DEUTSCHE ZUSAMMENARBEIT

Implemented by
giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

GIZ-ի հայաստանյան գրասենյակ

Տեղական զարգացման հիմնադրամ

ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ

Հայտերի ներկայացման վերջնաժամկետ՝

25 մարտի, 2025 թ., ժ. 17:00

Բովանդակություն

Հապավումների ցանկ 2

Ներածություն 2

1. Ընդհանուր պահանջներ 3

2. Ֆինանսավորման ուղղություններ և ոլորտային պահանջներ 5

3. Նվազագույն պահանջներ և թույլատրելի ծախսեր 12

4. Ինչպես դիմել 13

5. Հայտերի գնահատում և ընտրություն 14

6. Ֆինանսավորման կարգը 15

7. Ծրագրի իրականացումը և մշտադիտարկումը 15

8. Ժամանակացույց 16

9. Հավելվածներ 16

Հապավումների ցանկ

ԵՄ	Եվրոպական Միություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՇԶՀԳ	Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության
ՎԷ / ԷԱ	Վերականգնվող էներգիա / էներգաարդյունավետություն
ՏԶՀ	Տեղական զարգացման հիմնադրամ
ՏՀԶՆ	Գերմանիայի Տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարություն
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն
GIZ	Գերմանական միջազգային համագործակցության ընկերություն

Ներածություն

2021 թվականից Գերմանական միջազգային համագործակցության ընկերությունը (GIZ) մեկնարկել է Տեղական զարգացման հիմնադրամը (ՏԶՀ), որի նպատակն է նպաստել Հայաստանի մարզերում սոցիալ-տնտեսական զարգացմանը, տեղական դերակատարների կարողությունների զարգացմանն ու բազմակողմ երկխոսության և համագործակցության խթանմանը: Այս տարիների ընթացքում Հայաստանի բոլոր մարզերում իրականացվել կամ դեռևս ընթացքի մեջ է 47 ծրագիր, որոնց արդյունքում ստեղծվել է 228 աշխատատեղ, բարելավվել են 2800 տնային տնտեսությունների գյուղատնտեսական հնարավորությունները:

Գերմանիայի Տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության (ՏՀԶՆ) կողմից ֆինանսավորվող և Եվրոպական միության (ԵՄ) ու Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության (ՇԶՀԳ) կողմից համաֆինանսավորվող ՏԶՀ-ի շրջանակներում GIZ-ը հայտարարում է հայտերի ներկայացման հրավեր Հայաստանի Հանրապետության (ՀՀ) համայնքների, մասնավոր հատվածի կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) և այլ հետաքրքրված կազմակերպությունների համար՝ համաձայն սույն փաստաթղթում նկարագրված դրույթների:

ՏԶՀ-ն ներառում է ֆինանսավորման չորս հիմնական ուղղություն՝ համապատասխան ուղղվածությամբ և պահանջներով (տե՛ս «Ֆինանսավորման ուղղություններ և ոլորտային պահանջներ» բաժինը).

1. Վերականգնվող էներգիա և էներգաարդյունավետություն (ՎԷ/ԷԱ)
2. Համայնքային ծառայություններ
3. Տեղական տնտեսական զարգացում
4. Կանանց հզորացում և ներառականություն

Տեղական զարգացման հիմնադրամի ընդհանուր նպատակը **մարզային համայնքներում սոցիալ-տնտեսական զարգացման խթանումն** է: Դրանից բխող կոնկրետ նպատակներն են.

- տեղական տարբեր դերակատարների (ինչպիսիք են՝ համայնքապետարանները, մասնավոր հատվածի և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները) միջև միջոլորտային համագործակցության և երկխոսության խթանումը,
- սեփականության զգացման և մասնակցայնության խթանումը, ինչպես նաև համայնքի ներառական զարգացման գործում համագործակցելու և փոխզիջումների գնալու կարողությունը,
- GIZ-ի կողմից տարբեր ոլորտներում իրականացվող ծրագրերի միջև համագործակցությունը և փորձի մեկտեղումը:

1. Ընդհանուր պահանջներ

- Ներկայացվող բոլոր ծրագրերը պետք է ուղղված լինեն **մարզային համայնքների զարգացմանը**: Պետք է հստակորեն ներկայացվի ծրագրի ներդրումը կայուն, ներառական տեղական զարգացմանը և համապատասխանությունը ՏԶՀ-ի ոլորտներին (տե՛ս հաջորդ բաժինը):
- Մեկ հայտատուի կողմից կարող է ներկայացվել **առավելագույնը չորս հայտ**, սակայն կարող է ընտրվել **առավելագույնը երկու հայտ** (**նույն ոլորտում մեկից ոչ ավելին**):
- Բոլոր ծրագրերը պետք է հայտատու(ներ)ի կողմից **համաֆինանսավորվեն** ՏԶՀ-ից հայցվող գումարի **առնվազն 20%**-ի չափով:
- **Բնեղեն ներդրումը** (օրինակ՝ հողամասի, շենքի կամ տեխնիկայի տրամադրում) չի համարվում համաֆինանսավորում, սակայն կդիտարկվի որպես առավելություն:
- Երկու և ավելի հայտատուների (օր.՝ համայնքապետարաններ, բիզնեսներ և գործարար միավորումներ, ՔՀԿ-ներ) կողմից ներկայացված **համատեղ ծրագրերը** կստանան առավելություն:
- **Համատեղ ծրագրերի դեպքում** հայտատուներից յուրաքանչյուրը պետք է ապահովի ՏԶՀ-ից հայցվող գումարի առնվազն 20%-ի չափով համաֆինանսավորում: Օր.՝ եթե երկու կազմակերպության կողմից համատեղ ներկայացվող ծրագրի համար ՏԶՀ-ից հայցվում է 30,000 եվրո, որից Ա կազմակերպության համար՝ 10,000 եվրո, իսկ Բ կազմակերպության համար՝ 20,000 եվրո, ապա Ա կազմակերպությունը պետք է ապահովի առնվազն 2,000 եվրոյի չափով համաֆինանսավորում (10,000 եվրոյի 20%-ը), իսկ Բ կազմակերպությունը՝ առնվազն 4,000 եվրոյի չափով (20,000 եվրոյի 20%-ը):
- Մեկ հայտով **մինչև երեք կազմակերպություն** կարող է ստանալ ֆինանսավորում: Յուրաքանչյուր հայտատուին տրամադրվող գումարը կարող է կազմել ֆինանսավորման **ընդհանուր գումարի առավելագույնը 70%**-ը: Օր.՝ եթե երկու կազմակերպության կողմից համատեղ ներկայացվող ծրագրի համար ՏԶՀ-ից հայցվում է 30,000 եվրո, ապա նրանցից ոչ մեկը չպետք է ստանա 21,000 եվրոյից ավելի ֆինանսավորում:

- Համատեղ ծրագրերի դեպքում հայտերը **կարող են ներկայացվել միայն մեկ կազմակերպության (հիմնական հայտատուի) կողմից**՝ ուղեկցվելով մյուս(ներ)ի գրավոր հաստատմամբ: Հանձնառություններ ստանձնած բոլոր կողմերը պետք է կա՛մ **համաստորագրեն հայտը**, կա՛մ/և **կնքեն հուշագիր** (բազմակողմ՝ բոլոր հայտատուների միջև, կամ երկկողմ՝ հիմնական հայտատուի հետ): Հայտում պետք է հստակորեն նկարագրվեն յուրաքանչյուր կողմի ստանձնած պարտավորությունները:

- Խրախուսվում են **խոցելի/մարգինալացված խմբերի**, այդ թվում՝ երեխաների, երիտասարդների, կանանց, տարեցների, տեղահանված, հաշմանդամություն ունեցող անձանց և այլ խմբերի կարիքներին ուղղված նախաձեռնությունները: Առանձնահատուկ ուշադրություն կդարձվի միանգամից մի քանի տեսանկյունից խոցելի անհատների (օր.՝ հաշմանդամություն ունեցող տեղահանված կանանց) մարտահրավերներին ուղղված ծրագրերին: Հատկապես խրախուսվում են **գենդերային հավասարությունը և ներառականությունը** խթանող հայտերը: Ընդ որում, գնահատող հանձնաժողովն իրավասու է ֆինանսավորման յուրաքանչյուր ուղղությամբ կիրառել քվոտա՝ ընտրելով գենդերային հավասարությունը խթանող առնվազն մեկ ծրագիր:

- Համայնքապետարանների կողմից համաֆինանսավորվող բոլոր ծրագրերը պետք է **հաստատվեն ավագանու կողմից**, իսկ հայտի ընտրվելու դեպքում ծրագրերը պետք է արտացոլվեն համայնքների տարեկան աշխատանքային պլաններում և բյուջեներում:

- **Ֆինանսավորում ստացող կազմակերպությունը** (համատեղ ծրագրերի դեպքում՝ հիմնական հայտատուն) **ամբողջական պատասխանատվություն է կրում** ծրագրի համապարփակ իրականացման՝ ներառյալ երրորդ կողմ(եր)ից ֆինանսավորվող բաղադրիչների, ինչպես նաև GIZ-ին ամբողջական հաշվետվություն ներկայացնելու համար:

- Ֆինանսավորում ստացող կազմակերպություն(ներ)ը **պետք է հոգա(ն)** ծրագրի իրականացման ընթացքում գնաճի, արտարժույթի փոխարժեքի տատանումների կամ այլ պատճառներով առաջացած **ցանկացած լրացուցիչ ծախս** և ապահովի/են ծրագրի սահուն իրականացումը:

2. Ֆինանսավորման ուղղություններ և ոլորտային պահանջներ

Հայտերը կարող են ներկայացվել ստորև բերված 4 ուղղություններով սահմանված ոլորտներում.

1 Վերականգնվող էներգիա և էներգաարդյունավետություն (ՎԷ և ԷԱ)

- Հանրային շինությունների էներգաարդյունավետ վերազինում՝ այդ թվում շինությունների էներգաարդյունավետության բարելավում, էներգաարդյունավետ լուսավորություն, ջեռուցման, օդափոխության և օդորակման համակարգեր
- Հանրային շինությունների տանիքներին վերականգնվող էներգիայի (ՎԷ) համակարգերի տեղադրում
- Ջրամատակարարման ու ջրահեռացման ենթակառուցվածքներին առնչվող ՎԷ/ԷԱ միջոցառումներ
- Փողոցների էներգաարդյունավետ լուսավորություն՝ վերականգնվող (արևային) էներգիայի օգտագործմամբ
- ՎԷ/ԷԱ ցանկացած այլ նորարարական մոտեցում՝ կապված հանրային ենթակառուցվածքների հետ

2 Համայնքային ծառայություններ

- Գյուղատնտեսական ծառայություններ
- Թափոնների կառավարում և սանիտարական մաքրում
- Հանրային տրանսպորտ
- Նախադպրոցական և արտադպրոցական կրթություն

3 Տեղական տնտեսական զարգացում

- (Կանաչ և կայուն) Զբոսաշրջության զարգացում
- Գինեգործություն
- Տեքստիլ արդյունաբերություն
- (Կանաչ) տեխնոլոգիաների զարգացում

4 Կանանց հզորացում և ներառականություն

- Խոցելի խմբերին (հատկապես հաշմանդամություն ունեցողներին) սոցիալական ծառայություն-ների մատուցում
- Աջակցման ծառայություններ հատուկ կարիքներով երեխաներ ունեցող ծնողների համար
- Հաշմանդամություն ունեցող երեխաների համար հատուկ սարքավորումների տրամադրում
- Ներառական հանրային տարածքներ (հատկապես ընտանիքներին և երեխաներին ուղղված)

Հաջորդիվ ներկայացված են ոլորտային պահանջները.

Ֆինանսավորման ուղղություն	Թեմաներ և ընդհանուր շրջանակ	Թիրախային մարզեր	Ովքե՞ր կարող են դիմել	Ֆինանսավորման չափը	Մեկնաբանություններ
[1] Վերականգնվող էներգիա և էներգաարդյունավետություն (ՎԷ / ԷԱ)	- Հանրային շինությունների էներգաարդյունավետ վերազինում (տանիքների, նկուղների ջերմամեկուսացում, դռների/պատուհանների փոխարինում և այլն), էներգաարդյունավետ լուսավորություն, ջեռուցման, օդափոխության և օդորակման համակարգեր - Հանրային շինությունների տանիքներին վերականգնվող էներգիայի (ՎԷ) համակարգերի տեղադրում (արևային ֆոտովոլտային կայաններ, արևային ջրատաքացուցիչներ) - Ջրամատակարարման ու ջրահեռացման ենթակառուցվածքներին առնչվող ՎԷ/ԷԱ միջոցառումներ - Փողոցների էներգաարդյունավետ լուսավորություն՝ վերականգնվող (արևային) էներգիայի օգտագործմամբ (լամպերի, լուսատուների փոխարինում) - ՎԷ/ԷԱ ցանկացած այլ նորարարական մոտեցում՝ կապված հանրային ենթակառուցվածքների հետ	- Արարատ - Արմավիր - Արագածոտն - Գեղարքունիք - Լոռի - Շիրակ - Սյունիք - Տավուշ	- Համայնքապետարաններ (առանձին կամ այլ կողմերի հետ համատեղ՝ այլ համայնքապետարաններ, ՔՀԿ-ներ, հիմնադրամներ և այլն)	**50.000 - 60,000 եվրո (մոտ 20 - 25 մլն ՀՀ դրամ)** **Համատեղ ծրագրերի դեպքում** (օր.՝ երկու համայնքապետարան կամ համայնքապետարան և ՔՀԿ)՝ **մինչև 70,000 եվրո (մոտ 29 մլն ՀՀ դրամ)**	Բոլոր առաջարկվող ծրագրերը պետք է ուղղակիորեն առնչվեն վերականգնվող էներգիային և էներգաարդյունավետությանը: Առնչվող ենթակառուցվածքային միջոցառումները ևս կարող են դիտարկվել, օր.՝ տանիքի վերանորոգումը որպես տանիքի ջերմամեկուսացման կամ տանիքի վրա արևային կայանների համակարգերի տեղադրման ծրագրի մաս: ՎԷ/ԷԱ-ին չառնչվող առանձին ենթակառուցվածքային միջոցառումները (օր.՝ ջրամատակարարման ցանցի վերանորոգում) չեն կարող ֆինանսավորվել: **Յուրաքանչյուր հայտ պետք է ներառի հանրային ենթակառուցվածքի առնվազն 2 օբյեկտ**՝ ներառյալ սոցիալական ենթակառուցվածքներ (մանկապարտեզներ, նախակրթարաններ և մշակութային հաստատություններ), այլ հանրային շինություններ, փողոցների լուսավորություն, ջրամատակարարման և ջրահեռացման պոմպային համակարգեր: **Յուրաքանչյուր հայտ պետք է ներառի առնվազն 1 ԷԱ միջոցառում և 1 ՎԷ միջոցառում**: Խրախուսվում են համալիր ծրագրերը (ՎԷ և ԷԱ միջոցառումներ նույն օբյեկտի վրա): Հայտերը պետք է տեղեկություններ պարունակեն ներկայացվող բոլոր օբյեկտների մասին: Յուրաքանչյուր օբյեկտ կգնահատվի առանձին, և դրանց միջինով կձևավորվի վերջնական միավորը: Նախապես ընտրվելուց հետո հայտատուներից կպահանջվի ներկայացնել օբյեկտների տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացություն, որի հիման վրա կկայացվի վերջնական որոշումը:

Ֆինանսավորման ուղղություն	Թեմաներ և ընդհանուր շրջանակ	Թիրախային մարզեր	Ովքե՞ր կարող են դիմել	Ֆինանսավորման չափը	Մեկնաբանություններ
					Ընդհանուր առմամբ, ընտրվելու է 15 հայտ 15 համայնքից: Գնահատող հանձնաժողովն իրավունք ունի կիրառել քվոտա. սոցիալական ենթակառուցվածքներին առնչվող առնվազն 16 օբյեկտ և ջրային ոլորտին առնչվող առնվազն 10 օբյեկտ: Առաջնահերթությունը կտրվի հեռավոր / ապակենտրոն / սահմանամերձ և էներգետիկ տեսանկյունից խոցելի (չգազաֆիկացված, բարձրադիր, ջեռուցման երկարատև շրջան և այլն) բնակավայրերում գտնվող օբյեկտներ ներառող հայտերին: **ԿՖինանսավորվեն միայն ներդրումային ծախսերը:** Հայտերի ընտրվելուց հետո GIZ-ը աջակցությամբ կիրականացվի էներգետիկ աուդիտ, կճշգրտվեն միջոցառումները, կկատարվեն ֆինանսական նախահաշվարկներ, կկազմվեն ՎԷ և ԷԱ միջոցառումների տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև կիրականացվի մշտադիտարկում և վերահսկողություն:
[2] Համայնքային ծառայություններ	- Գյուղատնտեսական ծառայություններ - Թափոնների կառավարում և սանիտարական մաքրում - Հանրային տրանսպորտ - Նախադպրոցական և արտադպրոցական կրթություն Ծրագրի գործողությունները կարող են ներառել հետևյալը (և ոչ միայն). **Գյուղատնտեսական ծառայություններ**	Բոլոր մարզեր	- Համայնքապետարաններ (առանձին կամ այլ կողմերի հետ համատեղ՝ այլ համայնքապետարաններ, ՔՀԿ-ներ, հիմնադրամներ և այլն)	**30,000 - 40,000 եվրո (մոտ 12 - 16.5 մլն ՀՀ դրամ)** **Համատեղ ծրագրերի դեպքում** (օր.՝ երկու համայնքապետարան կամ համայնքապետարան և ՔՀԿ)՝ **մինչև 50,000 եվրո (մոտ 20 մլն ՀՀ դրամ)**	

Ֆինանսավորման ուղղություն	Թեմաներ և ընդհանուր շրջանակ	Թիրախային մարզեր	Ովքե՞ր կարող են դիմել	Ֆինանսավորման չափը	Մեկնաբանություններ
	• ոռոգման համակարգերի և ջրային ենթակառուցվածքների բարելավում • օրգանական գյուղատնտեսության և հավաստագրման համար համայնքապետարանի աջակցության տրամադրում • համայնքային սերմերի պահուստների կամ տնկարանների ստեղծում • գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերում **Թափոնների կառավարում և սանիտարական մաքրում** • կոմպոստացման համայնքային հարմարությունների ներդրում • աղբի վերամշակման ծրագրի ներդրում, հավաքման կետերի ստեղծում • բնապահպանական չափանիշներին համապատասխան համայնքային աղբավայրերի կառուցում/բարեկարգում • բանուկ տարածքներում հասարակական սանիտարական հարմարությունների տեղադրում • թափոնների կրճատման և վերամշակման վերաբերյալ իրազեկման արշավների իրականացում				

Ֆինանսավորման ուղղություն	Թեմաներ և ընդհանուր շրջանակ	Թիրախային մարզեր	Ովքե՞ր կարող են դիմել	Ֆինանսավորման չափը	Մեկնաբանություններ
	• սոցիալական և վարքագծային փոփոխությունների միջոցառումների իրականացում **Հանրային տրանսպորտ** • էկո-տրանսպորտային ծառայությունների գործարկում • կանգառների տեղադրում և արդիականացում • հետիոտնային և հեծանվային ուղիների կառուցում • տրանսպորտի միասնական ժամանակացույցի և տոմսային համակարգի մշակում • հասարակական տրանսպորտում հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության բարձրացում **Նախադպրոցական և արտադպրոցական կրթություն** • նախադպրոցական հաստատությունների հիմնում/վերանորոգում/կահավորում. • համայնքային կենտրոնների ստեղծում արտադպրոցական գործունեության համար (օր.՝ STEM ակումբներ, արվեստ և արհեստ, սպորտ): • հեռավոր շրջանների համար շարժական գրադարանների կամ կրթական ավտոբուսների ներդրում				

Ֆինանսավորման ուղղություն	Թեմաներ և ընդհանուր շրջանակ	Թիրախային մարզեր	Ովքե՞ր կարող են դիմել	Ֆինանսավորման չափը	Մեկնաբանություններ
[3] Տեղական տնտեսական զարգացում	- (Կանաչ և կայուն) Զբոսաշրջության զարգացում - Գինեգործություն - Տեքստիլ արդյունաբերություն - (Կանաչ) տեխնոլոգիաների զարգացում Ծրագրի գործողությունները կարող են ներառել հետևյալը (և ոչ միայն). • նպաստավոր գործարար և ներդրումային միջավայրի խթանում • տեղական ձեռներեցության համար գիտելիքի փոխանակման և շուկայավարման հնարավորությունների ցանցի ընդլայնում • տեղական պլանավորման գործընթացներում մասնավոր հատվածի կարիքների շահերի պաշտպանություն և ձեռնարկատերերի մենթորություն • արտադրողականության և մրցունակության բարձրացում • համայնքի կարիքների հասցեագրում և սոցիալական ազդեցություն • հմտությունների և որակավորումների բարելավում	Բոլոր մարզեր	- Բիզնեսներ - Գործարար միավորումներ - Համայնքապետարաններ - ՔՀԿ-ներ (օր.՝ հկ-ներ, հիմնադրամներ) - Վերոնշյալ կողմերի կոնսորցիումներ	**30,000 - 40,000 եվրո (մոտ 12 - 16.5 մլն ՀՀ դրամ)** **Համատեղ ծրագրերի դեպքում** (օր.՝ համայնքապետարան և բիզնես, բիզնես և ՔՀԿ և այլն)՝ **մինչև 50,000 եվրո (մոտ 20 մլն ՀՀ դրամ)**	Մասնավոր հատվածի կազմակերպությունների և համայնքապետարանների միջև համագործակցությունը խրախուսվում է:

Ֆինանսավորման ուղղություն	Թեմաներ և ընդհանուր շրջանակ	Թիրախային մարզեր	Ովքե՞ր կարող են դիմել	Ֆինանսավորման չափը	Մեկնաբանություններ
	• աշխատատեղերի ստեղծում և լրացուցիչ կամ այլընտրանքային եկամուտների ստեղծում • նորարարության խթանում և նորարարական մոտեցումներին հարմարեցում • կանաչ անցման և թվային վերափոխումների խթանում • ոլորտային և միջոլորտային համակարգման և համագործակցության ընդլայնում				
[4] Կանանց հզորացում և ներառականություն	- Խոցելի խմբերին (հատկապես հաշմանդամություն ունեցողներին) սոցիալական ծառայությունների մատուցում - Աջակցման ծառայություններ հատուկ կարիքներով երեխաներ ունեցող ծնողների համար - Հաշմանդամություն ունեցող երեխաների համար հատուկ սարքավորումների տրամադրում - Ներառական հանրային տարածքներ (հատկապես ընտանիքներին և երեխաներին ուղղված)	Բոլոր մարզեր	- ՔՀԿ-ներ և համայնքապետարաններ (միայն համատեղ նախաձեռնություններ)	**25,000 - 35,000 եվրո (մոտ 10 - 14.5 մլն ՀՀ դրամ)**	Հայտերում պետք է հստակորեն ցույց տրվեն, թե ինչպես է ծրագիրը նորարարական մոտեցումների միջոցով խթանելու ներառականությունը, երեխաների բարեկեցությունը (օր.՝ հաշմանդամություն ունեցող երեխաների համար) և կանանց աջակցությունը:

3. Նվազագույն պահանջներ և թույլատրելի ծախսեր

Հայտերի ներկայացման իրավերը բաց է Հայաստանի Հանրապետությունում գրանցված կազմակերպությունների համար: Կարող են ներկայացվել միայն մայրաքաղաքից դուրս, մարզերում իրականացվող, և կայուն ու ներառական տեղական զարգացմանը նպաստող ծրագրեր: Բազմակողմ համագործակցությունը խթանելու նպատակով խրախուսվում է մի քանի կազմակերպությունների կողմից համատեղ հայտերի ներկայացումը:

Հայտատուները պետք է բավարարեն ներքոնշյալ **նվազագույն պահանջներին**.

- Համապատասխանեն տվյալ ուղղությամբ սահմանված նվազագույն չափանիշներին՝ ներառյալ իրավական կարգավիճակը,
- Սույն հրավերի հրապարակումից առնվազն մեկ տարի առաջ գրանցված լինեն իրավաբանական անձանց պետական ռեգիստրում,
- Ներառված չլինեն ՄԱԿ-ի, Եվրոպական Միության և/կամ Գերմանիայի Դաշնային Հանրապետության կողմից պատժամիջոցների ենթարկված կազմակերպությունների ցուցակում:

Համատեղ հայտերի դեպքում գործում են հետևյալ լրացուցիչ պահանջները.

- Հիմնական հայտատուն պետք է լինի ՀՀ-ում գրանցված կազմակերպություն և գործընկերություն հաստատի առնվազն մեկ համահայտատուի հետ,
- Ծրագրային առաջարկներում պետք է գումարները հստակորեն բաշխվեն համահայտատուների միջև՝ ծրագրի իրականացման գործում վերջիններիս կատարած գործառույթներին և պարտականություններին համապատասխան:

Թույլատրելի ծախսեր

Յուրաքանչյուր ուղղության թույլատրելի ծախսերը կախված են առաջարկվող գործողության ոլորտից և շրջանակից: Սահմանված թեմաներից և գործողությունների շրջանակից դուրս կատարվող ծախսերը համարվում են անթույլատրելի:

Ծախսային խումբ	Համայնքներ	Բիզնեսներ	ՔՀԿ-ներ
Շինարարական աշխատանքների գնում	✅	❌	❌
Ապրանքների գնում	✅	✅	✅
Վերապատրաստման ծախսեր	✅	✅	✅
Արտաքին փորձագետների վարձատրություն և այլ արտաքին ծառայությունների գնում	✅	✅	✅
Միջոցառումների կազմակերպման ծախսերը (օր.՝ սրահ, հյուրասիրություն)	✅	✅	✅
Ճանապարհածախս (միայն հիմնավորված դեպքերում և GIZ-ի կարգավորումների սահմաններում)	✅	✅	✅
Անձնակազմի վարձատրություն (աշխատավարձ՝ ներառյալ հարկերը, այդ թվում՝ սոցիալական վճարներ. ընդհանուր բյուջեի առավելագույնը 25%-ի չափով)	❌	✅	✅
Գրասենյակային տարածքի վարձակալության վճար (առանց երկրորդային ծախսերի)	❌	✅	✅

Անթույլատրելի ծախսեր

- Անուղղակի գործառնական ծախսեր, օր.՝ կոմունալ վճարումներ, հեռահաղորդակցության ծառայություններ, գրասենյակային պարագաներ և այլն
- Վարկեր երրորդ կողմին
- Շահառու(ներ)ի կողմից ներկայացված, սակայն այլ դոնորի կողմից ֆինանսավորված ծախսեր
- Հողամասերի և շինությունների ձեռքբերման ծախսեր
- Արտարժույթի փոխարժեքի տատանման արդյունքում կորուստներ
- Ծրագրի իրականացման՝ պայմանագրով սահմանված ժամկետից առաջ և հետո կատարված ծախսեր

4. Ինչպես դիմել

Ցուցումներ հայտատուների համար

Հետաքրքրված կազմակերպություններին խորհուրդ է տրվում իրենց հայտերը պատրաստելուց և ներկայացնելուց առաջ մանրամասնորեն ուսումնասիրել սույն հրավերը: Ժամկետից ուշ ներկայացված և թերի հայտերը կարող են մերժվել:

Հայտերին ներկայացվող պահանջները

Հայտերը պետք է մշակվեն տվյալ ուղղության համար հավելված 1-ով սահմանված նմուշին համապատասխան:

Համայնքապետարանների դեպքում հայտերը պետք է հաստատված լինեն ավագանու կողմից: Ավագանու որոշման օրինակելի ձևը ներկայացված է համապատասխան ուղղության փաստաթղթերի փաթեթում[1]:

Հայտի փաթեթը պետք է պարունակի հետևյալ փաստաթղթերը

- **Լիարժեք լրացված հայտ** (հավելված 1),
- **Ծրագրի բյուջե** (հավելված 2),
- **Քաղվածք ավագանու որոշումից** (հավելված 4. կիրառելի է միայն համայնքապետարանների դեպքում),
- **Քաղվածք իրավաբանական անձանց պետական ռեգիստրից** (հայտատու բոլոր կազմակերպությունների համար. քաղվածքը պետք է կազմված լինի սույն հրավերի հրապարակմանը նախորդող 6 ամսվա ընթացքում),
- **Առաջարկվող ծրագրի իրականացման վայրի լուսանկարներ** (պարտադիր է առաջին ուղղության համար՝ վերականգնվող էներգիա և էներգաարդյունավետություն, առկայության դեպքում ցանկալի է մյուս ուղղությունների համար),

[1] Եթե հայտը ներկայացնելիս ավագանին դեռևս ձևավորված չէ, համայնքապետարանը կարող է ժամկետի մեջ ներկայացնել մնացած փաստաթղթերը, իսկ ավագանու որոշումը ներկայացնել լրացուցիչ՝ ամենաուշը մինչև հայտերի վերջնական ընտրությունը: Նման դեպքերում համայնքապետարանը պետք է հայտը ներկայացնելիս տեղեկացնի GIZ-ին:

- **Առաջարկվող օբյեկտների տեխնիկական բնութագրերի մանրամասն հարցաշար (առանձին լրացված հարցաշար հայտում ներառված յուրաքանչյուր օբյեկտի համար)** (հավելված 6. կիրառելի է միայն ուղղություն 1-ի դեպքում),
- Ծրագրին առնչվող **այլ փաստաթղթեր** (օր.՝ անշարժ գույքի սեփականության վկայականներ, հանրային լսումների արձանագրություններ, հուշագրեր, աջակցության նամակներ, համագործակցության և համաֆինանսավորման համաձայնագրեր և այլն):

Մինչև վերջնաժամկետը հայտի փաթեթի թերի ներկայացման դեպքում հայտը կարող է մերժվել:

Հայտերի ներկայացման կարգը

Հայտերը պետք է կազմվեն **հայերենով** և ուղարկվեն LDF-Armenia@giz.de հասցեին՝ նամակի վերնագրի դաշտում նշելով «ՏՋՀ հայտ 1/2/3/4 (կախված ֆինանսավորման ուղղությունից). հայտատու կազմակերպության անվանումը»:

Գործընթացին առնչվող բոլոր հարցերը կարող են ուղարկվել նույն հասցեին:

Հայտերի ներկայացման վերջնաժամկետ՝ 25 մարտի, 2025 թ., ժ. 17:00:

Պահանջվող փաստաթղթերի, ընտրության գործընթացի և այլ հարցերի լրացուցիչ պարզաբանումների համար հայտերի ներկայացման փուլում հետաքրքրված կազմակերպությունների համար կկազմակերպվեն **տեղեկատվական հանդիպումներ**, որոնց մասին կտրվի լրացուցիչ ծանուցում:

5. Հայտերի գնահատում և ընտրություն

Հայտերի գնահատման գործընթացը կմեկնարկի GIZ-ի կողմից **փաստաթղթերի ստուգումով**: Այս փուլում կգնահատվեն հայտերի ամբողջականությունը, համապատասխանությունը նախորդիվ թվարկված նվազագույն չափանիշներին և ընդհանուր պահանջներին: Մեկ կամ մի քանի առանցքային չափանիշների (օր.՝ նվազագույն պահանջներ, նվազագույն համաներդրում, ՏՋՀ-ի թեմաներին համապատասխանություն) **չհամապատասխանող հայտերը չեն ներկայացվի հետագա գնահատման**:

Հայտերի գնահատումը կատարվելու է **գնահատող հանձնաժողովի** կողմից՝ հավելված 3-ով յուրաքանչյուր ուղղության համար ներկայացված **գնահատման սանդղակի** հիման վրա: Լրացուցիչ տեղեկություններ ստանալու նպատակով գնահատող հանձնաժողովը կարող է նաև իրականացնել **այցեր** որոշ ծրագրերի իրականացման վայրեր:

Գնահատման առավելագույն չափը 1000 միավորն է: Յուրաքանչյուր չափանիշ գնահատվում է ամենացածր 1-ից մինչև ամենաբարձր 10 միավորով և բազմապատկվում համապատասխան կշռով: Գնահատման **նվազագույն անցողիկ շեմը 500 միավորն** է: Այնուամենայնիվ, անցողիկ միավորներ ստանալը չի երաշխավորում ծրագրի ֆինանսավորում, քանզի ընտրության գործընթացը մրցակցային է և կախված է **ֆինանսական միջոցների առկայությունից**: Եթե անցողիկ շեմը հաղթահարած ծրագրերը գերազանցում են ֆինանսավորման առկա հնարավորությունները, առաջնահերթությունը տրվում է առավել բարձր միավորներ ստացած ծրագրերին:

6. Ֆինանսավորման կարգը

Ընտրված հայտատուները կծանուցվեն, և կմեկնարկի պայմանագրերի կնքման գործընթացը: Կախված հայտատուների կարողություններից և փորձից՝ կարող են ընտրվել ֆինանսավորման տարբեր գործիքներ:

Ընդհանուր առմամբ, ֆինանսավորումն իրականացվում է կանխավճարների ձևով՝ հիմնվելով ստացող կազմակերպության պահանջի վրա: GIZ-ի կողմից գումարը փոխանցվում է ստացողի հատուկ բանկային հաշվեհամարին, որին պետք է կատարվեն ծրագրին առնչվող բոլոր փոխանցումները (համայնքների դեպքում պարտադիր են արտաբյուջետային հաշիվները):

Յուրաքանչյուր հաջորդ կանխավճար կարող է հայցվել նախորդի շրջանակներում կատարված ծախսերի վերաբերյալ ֆինանսական հաշվետվության և ծախսման ապացույցների ներկայացումից հետո: Հաշվետվությունը պետք է պարունակի կից փաստաթղթեր՝ վճարման հանձնարարականներ, պայմանագրեր, բնօրինակ բանկային քաղվածքներ և այլ փաստաթղթեր՝ GIZ-ի կարգավորումներին համապատասխան:

Բոլոր ֆինանսական և բովանդակային հաշվետվությունները պետք է կազմվեն <u>անգլերենով</u>, կամ կցվեն անգլերեն թարգմանություններ:

> ***Ուղղություն 1-ի վերաբերյալ նշում՝*** *վերականգնվող էներգիայի և էներգաարդյունավետության ոլորտում իրականացվող ծրագրերի պարագայում GIZ-ը նախատեսում է ներգրավել մասնագիտական կառույց, որը կիրականացնի նախնական ընտրված օբյեկտների էներգետիկ աուդիտ, կաջակցի հայտատուներին լրամշակել ծրագրային առաջարկները, ենթադրամաշնորհների միջոցով կօժանդակի դրանց իրականացմանը, ինչպես նաև կկատարի իրականացված ծրագրերի մշտադիտարկում: Ենթադրամաշնորհները ընտրված հայտատուներին տրամադրվելու է վերոնշյալ մասնագիտական կառույցի կողմից՝ GIZ-ի կարգավորումներին համապատասխան:*

Ուշադրություն՝ ծրագրերը պետք է կազմվեն այնպես, որ հայտատուի սեփական միջոցներն ամբողջությամբ ծախսվեն և դրանց վերաբերյալ ֆինանսական հաշվետվությունները ներկայացվեն ծրագրի գործողության ժամկետի սահմաններում: GIZ-ի կողմից վերջնավճարը կկատարվի միայն ստացողի՝ պայմանագրով սահմանված սեփական ներդրման ամբողջական կատարումը հավաստող ֆինանսական փաստաթղթերը ներկայացնելուց հետո:

7. Ծրագրի իրականացումը և մշտադիտարկումը

Պայմանագրի կնքումից հետո ստացողները մեկնարկում են ծրագրի իրականացումը՝ համաձայն պայմանագրով սահմանված ժամանակացույցի:

Ծրագրերի իրականացման առավելագույն ժամանակահատվածը **մեկ տարի** է, մեկնարկի նախնական ժամկետը՝ 2025 թ. հուլիսը: Համայնքապետարանների դեպքում որոշ ծրագրերի իրականացման վերջնաժամկետը 2025 թ. նոյեմբերն է: Պայմանագրի գործողության ընթացքում կատարված վճարումների վերաբերյալ փաստաթղթերը պետք է ներկայացվեն մինչև պայմանագրի գործողության ժամկետի ավարտը: Դրանից դուրս կատարված ծախսերը ենթակա չեն ՏՋՀ-ի շրջանակներում ֆինանսավորման:

Ծրագրերի իրականացման ընթացքում և դրանից հետո ստացողները պետք է պատրաստ լինեն տրամադրել անհրաժեշտ տվյալներ և տեղեկություններ գործընթացի, արդյունքների և առաջացած մարտահրավերների վերաբերյալ: GIZ-ը և վերջինիս դոնորները ծրագրի ավարտից երեք տարվա ընթացքում իրավասու են իրականացնելու մշտադիտարկման այցեր ծրագրերի իրականացման վայրեր:

8. Ժամանակացույց

2025 թ. փետրվար	Հայտերի ներկայացման հրավերի հրապարակում
2025 թ. փետրվար-մարտ	Հետաքրքրված կազմակերպությունների համար տեղեկատվական հանդիպումներ
2025 թ. մարտի 25	Հայտերի ներկայացման վերջնաժամկետ
2025 թ. մարտի վերջ	Վարչական ստուգում, այդ թվում՝ նվազագույն չափանիշներին համապատասխանության ստուգում
2025 թ. ապրիլ	Հանձնաժողովի գնահատում և այցեր
2025 թ. մայիս	- Նախնական ընտրված հայտատուների գործունակության և իրավունակության ստուգում - Հայտերի լրամշակում՝ ըստ անհրաժեշտության
2025 թ. մայիսի վերջ	Վերջնական ընտրություն և արդյունքների հրապարակում
2025 թ. հունիս	- Համայնքների ՏԱՊ-երում և բյուջեներում ծրագրերի ներառում (եթե կիրառելի է) - Ընտրված հայտատուների հետ մեկնարկային հանդիպում՝ ներկայացնելու պայմանագրային կարգավորումները և իրականացման վերաբերյալ այլ տեղեկություններ
2025 թ. հունիս-հուլիս	Պայմանագրերի կնքում *Ուղղություն 1-ի դեպքում հանձնաժողովի գնահատումից հետո և իրականացման մեկնարկից առաջ իրականացվելու է օբյեկտների էներգետիկ աուդիտ՝ հաստատելու ծրագրերի տեխնիկական իրագործելիությունը, ծավալը և ներդրման անհրաժեշտ չափը:*
2025 թ. հուլիսից սկսած	Իրականացում (վերջնաժամկետը կսահմանվի ծրագրերի ընտրությունից հետո)
Իրականացման ընթացքում և ավարտից մինչև 3 տարի հետո	Մշտադիտարկում (ներառյալ՝ այցեր, ծրագրի իրականացումից առաջ և հետո իրավիճակների համեմատական վերլուծություն, տվյալների հավաքագրում)

9. Հավելվածներ

Հավելված 1. Հայտի նմուշ
Հավելված 2. Բյուջեի նմուշ
Հավելված 3. Գնահատման սանդղակ
Հավելված 4. Ավագանու որոշման օրինակելի ձև (միայն համայնքապետարանների դեպքում)
Հավելված 5. Կայուն զարգացման նպատակների շտեմարան
Հավելված 6. Առաջարկվող օբյեկտների տեխնիկական բնութագրերի մանրամասն հարցաշար (միայն ուղղություն 1-ի դեպքում՝ վերականգնվող էներգիա / էներգաարդյունավետություն)